

ԴԵՊԻ ՕՀԱԿԱՆ

Դեռափթիթ ուռենիները խաղաղ ճանապարհի երկու կողմերում՝ գլուխ կորացրած, քաղցրամբմունջ շըբշւնով ողջունում էին մեզ: Նեղիկ ճամբան գլխաւորապէս ընկած է դաշտերի և արտերի մէջ տեղ: Երբեմն էլ տռապարներ էինք մտնում, ժէռուտ պատուաներն անցնում, իջնում դէպի ներքե, դէպի Քասախ գետ:

Քասախը բարկացած գետ է, բարկացած ծերուկ է յիշեցնում: Ալիքները միշտ յուզուած են, կոհակները վրգովուած, ծոցերը բորբոքուած: Սահում են ջրերը՝ փրփուրն երեսներին, սահում են քարերի, ժայռերի հետ մաքառելով:

Մերթ գալարուում էր Քասախը, գոռում հանց վիշապ և խոր ձորերի հանդիպելիս պաղպաջուն յորձանքները քուլալ քուլալ ամպերի նման գլորում ցած, ապա նետուում ձորի խորքերը ու մոնչալով, ծառերի արանքները քերելով, սահում դէպ առաջ, դէպի խիտ անտառներ ու մրգաւէտ այգիներ:

Օշականի մօտ, աջ ու ձախ ափերին՝ խնկաւէտ փշատենիքը կռացել, գուրգուրում էին նորան, շոլում, փաղաքշում ջրերը:

Օշական գիւղն ընկած էր Քասախից փոքր ինչ քարձր, ընդարձակ թումբի վերալ, խիտ կանաչների արանքում:

Խորին անդորրութիւն էր տիրում ամենուրեք Լաւում էր միայն գետի վշշոցը, մերթ ընդ մերթ աքաղաղների կանչը, իսկ փոքր ինչ հեռուում հալ գիւղացու իւր եզան ուղղած խրախուսի ձախնը:

Գիւղը մտանք, Օշական գիւղը, իշխան Վահան Ամատունսւ երանելի ոստանը,

Սքանչելի տեսարան է ընկած մեր աչքի դիմաց:

Մի տեղ Մասիսն է սիդապանծ հսկալի նման կանգնած, միւս կողմ գեղանիշ Արագածն է փոռուած, ապա կապուտ մշուշի մէջ Արալի լեռներն են տարածուած:

Աչա և մեր մօտ Օշականի եկեղեցու հոյակապ զանգակատունը, որ կանգնել է Գէորգ դ. մեծագործ կաթուղիկոսը:

Այդ զանգակատան տակն է գտնւում հայոց դպրութեան Հօր—Հայոց մտաւոր անդաստանի մեծ մշակի—Հալոց գիրը հնարողի—խնկելի Մեսրոպի գերեզմանը:

Մատանք եկեղեցու բակը: Թաւախիտ թթենու ստուերում կանգնեցինք մի նորագոյն մահարձանի առաջ, սուզութեցինք լուսութեան մէջ և անցանք հին-հին օրերը:

Գեղեցիկ մահարձան: Նորա տակ հանգչում էին անձկաւէտ իշխան Վահան Ամատունու սուրբ նշխարները:

Սուրբ շիրիմ: Ծունկ չոքեցինք, համբոյր տուինք սառ արձանին: Մակալն խունկ չծխեցինք և ոչ մոմ վառեցինք: Ե՛, մեր սրտերը բուրվառներ էին, իսկ Վահանի լիշտատակը խնկաբոյր կրակ բուրվառանման սրտի խորքերում:

Հայոց դպրութիւնը սիրեց Վահան, Հայոց դպրութեան Հօր նշխարները փալփալեց, իւր ջերմ արտասուրով լուացաւ, իւր ձեռով փաթաթեց, իւր սստանում ամփոփեց: Իւր երկրի համար ալդ գերեզմանը փառք համարեց և այդ փառքով ժողովուրդը ոգևորեց: Գիր սիրեց, գիր տուղին պաշտեց, գերեզմանն ուխտատեղի դարձեց:

Մենք աչքի աղի կաթիլներով Վահանի երանաւէտ լիշտատակը ցօղեցինք, ապա եկեղեցի մտանք և վառուած կարօտով, ծովացած իղձերով ու անհուն փափագով սուրբ Հօր դամբանին մօտեցանք:

Սուրբ Մեսրոպի նուիրական շիրիմը փոքրիկ խորանի մէջ էր զետեղուած, համեստ քարով զարդարած, շուրջը աղօտ լուսով լուսաւորած:

Ողջուն շնչացի, ծնկների ընկալ, քարը գրկեցի, Մեսրոպ կանչեցի... Մեսրոպ դուրս փղձկաց իմ սրտի խորքից... Ախ, ինչե՞ր տենչացի...

Ի՞նչ կուզէ յուզուած ծովը, որ ալիքներ է զարնում
ափերին, որ մոնչոց է արձակում վրդովուած ծոցից, որ
ծփեփում է, կուրծքը ուռճացնում, բարձրացնում գէպ
վեր:

Իմ կրծքի տակն էլ, իմ սրտի մէջն էլ ծով էր,
տենչերի ծով, որի ալիքները գրոհ էին տալիս և ուժ-
գին զարնում թելերին:

Ինչե՞ր էի որոնում, ինչ կարօտ, ինչ փափագ ու-
նէի: Վարանում էի, չէի հանգստանում, սառած
քարն էի համբուրում, գերեզմանն էի գըկել:

—Խօսիր, ով հայր, խօսիր, հային խօսք տուողդ,
յեզու բաց արա՝ ազգիդ յեզու շնորհողդ, գիրք կարդա՝
հայութեան գիրն ստեղծողդ:

Գերեզմանիդ վերալ պշըանք չեն շողում, հոյակապ
զանգակատուն է կանգնած. անուանդ խօսնակ արձան
չկալ, բայց առաւօտ – երեկոյ զանգակ է զողանջում,
քաղցրավիր լիշտակդ մըմնջում: Մեծ գործերիդ նիւ-
թեղէն թարգման չունիս, բայց թարգմանութիւններդ
անմահ են, մշտախօս են, շողուն են ինչպէս արեւ:

Քո լոյսը չի հանգչիլ, վասն զի Աւետարանի օջա-
խից փոխարինեցիր, գիրդ զի ջնջուիլ, չի Աստուածա-
շունչ է,

Սառած գերեզման... Համեստ քարի տակ մեծ հօր
ոսկորներն են, բայց ես ձայնի եմ սպասում. ձայն չը-
կալ: Հարցեր եմ տալիս, պատասխան չկալ: Հառաջում
եմ և իմ հառաջանքին խօրանի մուշլոտ կամարներն
են. արձագանք տալիս:

Արձանացել եմ սուրբ գերեզմանի մօտ: Պատկեր
է կանգնած իմ աչքի առաջ, մեծ հօր պատկերը: Բա-
ժանուել չեմ ուզում: Բաժանուելը ծանր է:

Լսուեց զանգակի դիւթական դողանջիւնը, հնչուեց
«Օքհնեալ Տէր մերը. ահա և Մեսրոպի խօսքը, Մեսրո-
պի լեզուն»:

Համբոլը տուի գերեզմանին, համբոլը խնկահոտ
քարին, համբոլը արևաշող գրքին: Մի խոր հառաջ ևս
ու դուքս եկալ խորանից:

Եկեղեցումն եմ, Քահանաները փիլոնները ծածկած,
կանգնած են գրքակալների առաջ: Նորանց վերալ բա-

ցուած են գրքերը։ Ամենն էլ Մեսրոպի գրով գրած,
Մեսրոպի լեզուով շարադրած։

Նոր գերք չէ։ Հազար հինգ հարիւր տարուայ
գերք է։ Հազար հինգ հարիւր տարի... Մի արիւնոտ
խաչ և Մեսրոպի թարգմանած աւետարանը հազար
հինգ հարիւր տարի սեղմուած են հայի կրծքին։

Եկեղեցուց դուրս եկանք, անցանք Օշականի ալո-
և այն անկիւնները։ Ամենուրեք լսում էր Քասախի
վշշոցը. գիւթիչ վշշոց, պատմախօս ու պատգամախօս
վշշոց։

Այդիներով հարուստ է Օշականը, ամեն տեսակ
մրգեր, ամենքից շատ խաղող,

Այդի մտանք, ալդեպանի հիւրասիրութիւնը վա-
լելեցինք։ Խաղող կերանք Քասախի ջրով ոռոգուած,
Մասիսի ամպերից գուրգուրուած, Արագածի հովերով
զովացած։ Ապա հիւրասէր հայ գիւղացու խրճիթը մը-
տանք, նորա սէրն ու կարագը վալելեցինք։ Իսկ ամեն-
քից համով մածնէ բրդիւշն ընդունեցինք։ Կենարար
բրդիւշ։ Ինչ համ, ինչ քաղցրութիւն։ Մեսրոպի շիրմե-
յօտից բղխող աղբեկրի ջրով էր խառնած։

Արևը մալր մտաւ։ Մթնշաղի արանքում ճանա-
պարհ ընկանք դէպի Աշտարակ։

Երեկոյ է։ ճանապարհի աջ ու ձախ կողմերում,
ծաղիկների և խոտերի մէջ ճշում են ճպուռները, ա-
ռուակի ափերին գորտերն են կրկուում, իսկ փոքը ինչ
հեռու հովառու շինականի սրնգի ձայնն է լսում։

Գնում ենք բարց իմ միտքը դէպի Օշական, դէպի
սուրբ Մեսրոպի գերեզմանը։

ԱՐԵՍԱԿԱՑԵՇՈՒՆԻԴ